ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ XVIII ԴԱՐՈՒՄ ԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ*

Բ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի խանությունը XVIII դարում Պարսից պետության ծայրամասային նահանգներից մեկն էր կազմում։ Նա կառավարվում էր Իրանի շահի կողմից նշանակված նահանգապետներով, որոնք պաշտոնապես բեկլերբեկ *էին կոչվում, իսկ տեղում նրանց անվանում էին պարզապես* խան։ *Որպես ծայրամասային նահանգի պետ՝ Երևանի բեկլերբեկը միաժամանակ հանդիսանում էր զորքի հրամանատար, որին պատերազմի պայմաններում ենթարկվում էին նաև մի քանի այլ սահմանակից խանությունների զորքերը։ Այս պատճառով նա կրում էր նաև* սարդար *տիտղոսը։*

XVIII դարի երկրորդ կեսին, Իրանում տեղի ունեցած գահակալական կռիվների և երկպառակությունների հետևանքով՝ Երևանի խանությունը փաստորեն անջատվեց Իրանից և առժամանակ ընկավ Վրաստանի թագավոր Իրակլի Բ-ի գերիշխանության տակ, պարտավորվելով վճարել վերջինիս տարեկան 40.000 թուման գումար, բայց պահպանելով իր ներքին ինքնավարական իրավունքները։ Սակայն այդ կախումը երկար չտևեց։ Դարի իննսնական թվականներին, քաղաքականապես Վրաստանի թուլացման և Իրանում պետական իշխանության վերականգնման և ուժեղացման հետևանքով՝ Երևանի խանությունը նորից ենթարկվեց Իրանի կենտրոնական իշխանությանը։

Երևանի բեկլերբեկն իր կառավարման ենթակա երկրում սեփական ձեռքում էր կենտրոնացրել պետական ամբողջ ապարատը։ Կենտրոնական իշխանությունը որոշ շահագրգռվածություն էր հանդես բերում միայն ֆինանսական,

---

**Հանդուցյալ Բ. Հարությունյանը վերջին տարիների ընթացքում Հայաստանի X—XIII դարերի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության գծով մեծ աշխատանք էր կատարել։ Վաղաժամ մահը թույլ չտվեց նրան տարիների իր աշխատանքը լրիվ ավարտել ու հանձնել տպագրության. այնուամենայնիվ աշխատության ավարտված գլուխները զգալի հետաքրքրություն են ներկայացնում և արժանի են հրատարակության։*

Հանդուցյալը թողել է նաև ձեռագիր մի քանի հոդվածներ, որոնք մեծ մասամբ թերավարտ են և կտրուկ վերջնական մշակման։ Դրանցից է նաև սույն հոդվածը, որը նմանապես լրիվ ավարտված չէ։ Հեղինակը նպատակ է ունեցել հոդվածին կցել XVIII դարի նոմինալ և ռեալ աշխատավարձի տատանումներն արտահայտող ու սպառման հիմնական արտադրանքների գների շարժումը պատկերող աղյուսակներ, կազմված Պետ. Մատենադարանի Արխիվային բաժնում պահվող Էջմիածնի վանքի հաշվեմատյանների տվյալներով, որոնք սակայն նա չի հասցրել ամբողջացնել։ Այդ աղյուսակների սեղրությունները խիստ թերի են ու անմշակ և այդ վիճակում հնարավոր չէ հոդվածին կից հրատարակել (Խմբ.)։

հատկապես հարկա-տուրքային խնդիրներում և երբեմն իր հատուկ պաշտոնյաների միջոցով ցուցակագրության ենթարկում պետական (դիվանի) հարկերի ենթակա օբյեկտները։ Դարի վերջին, Վրաստանի վասալությունից Իրանի պետությանն անցնելով՝ Երևանի սարդարն ավելի ընդարձակեց իր ինքնավարական իրավունքները. նա այժմ երկրի ինքնիշխան տեր էր համարում իրեն՝ պարտավորություն ունենալով միայն տարեկան որոշ գումար տուրք վճարելու Իրանի կենտրոնական իշխանությանը և պատերազմի ժամանակ ռազմական օգնություն հասցնելու նրան։

Երկրի ինքնիշխան տեր համարելով իրեն՝ սարդարը նայում էր արքունական հողերի և այլ կալվածքների (այգիների, ջրաղացների և այլն) վրա՝ որպես իր սեփականության։ Նրանց մշակման և օգտագործման համար նա մեծ մասամբ բանեցնում էր գյուղական համայնքներից պարտադիր կարգով, որպես պետական պարհակ ստացվող բանվորական ուժ։ Պետական պարհակով էին կատարվում նաև ճանապարհաշինարարությունը և նման աշխատանքները։ Հողերի մի մասն էլ տրվում էր գյուղացիությանը «յարիքյարային» (կիսու) կարգով մշակելու։

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Վարձու աշխատանքի կիրառումը սարդարի ֆեոդալական տնտեսության մեջ վերոհիշյալ պարագաներում, բնականաբար, խիստ սահմանափակ էր և արտահայտվում էր գերազանցապես որակյալ բանուժի օգտագործման բնագավառում, այն էլ գլխավորապես արդյունագործական ձեռնարկություններում (դինկ, ջրաղաց, չրեխ, ձիթհան և այլն) և բարդ շինարարական աշխատանքներում։ Սակայն այս պայմաններում էլ վարձու սեագործ աշխատանքի համար ստեղծվել էին որոշ հնարավորություններ։ Պարհակային կարգով տարվող վերոհիշյալ աշխատանքները սարդարը բաշխում էր ոչ թե առանձին տնտեսությունների, այլ գյուղական և քաղաքային համայնքների վրա, իսկ վերջիններս համապատասխան թվով աշխատանքային օրերի հաշվով բաժանում էին իրենց անդամ տնտեսությունների վրա։ Գյուղական և քաղաքային ունևոր խավերը, շատ անգամ խուսափելով անձամբ լրացնելու իրենց վրա ընկած աշխատանքային օրերը, իրենց փոխարեն մշակներ էին վարձում գյուղի չքավոր տարրերից։ Քիչ չէր պատահում, որ համայնքի վրա ընկած աշխատանքային օրերը լրացնելու համար «ջյուղովի» մշակներ էին վարձում՝ մեծ մասամբ նույն համայնքի անդամ չքավորներից և ուղարկում աշխատանքի։ Այսպիսի դեպքերում մշակներին տրված վարձը մուծվում էր համայնքի հասարակական ծախսերի մեջ և սրանց հետ միասին բաշխվում առանձին տնտեսությունների վրա։

Ի. Շոպենը՝ թվելով մի շարք այդպիսի աշխատանքային տուրքեր, որ դրված էին սարդարի կողմից գյուղացիների վրա իր այգիների մշակման համար, հաշվում է, որ այդ «նարյադ»-ները նստում էին գյուղացիներին, չհաշված նրանց Երևան քաղաքը գալու և վերադառնալու ժամանակը, մինչև 6000 բանվորական օր[1]։

---

[1] *И. Шопен*, Исторический памятник состояния Армянской области.... СПб, 1852, էջ 060։

Պետական նշանակություն ունեցող խոշոր կառուցումների համար պարտադիր կարգով համայնքներից հավաքագրվող մշակների վարձը սովորաբար տրվում էր արքունական գանձարանից։ Սակայն, շատ հաճախ այդ վարձը ավելի ցածր էր լինում տվյալ ժամանակի և տեղի սովորական աշխատավարձից, ուստի համայնքները իրենց կողմից ուղարկված մշակներին տալիս էին լրացուցիչ աշխատավարձ։ Պատահում էր, որ արքունական գանձարանը բոլորովին չէր վճարում. այս դեպքում ամբողջ աշխատավարձը վճարում էին համայնքները։ Այս կարգը, ինչպես երևում է, գալիս էր հնուց։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ մենք հանդիպում ենք հետևյալ տողերին.

«Ի շինուածս քաղաքի և բերդի եթէ պակասիցէ գանձ արքունի, ամենեքեան հասարակ վճարիցեն»[1]։

Զաքարիա Ագուլեցին Երևանի բերդի արևելյան պարսպի շինության առթիվ գրում է.

«Թվին ՌՃԻԱ (1672) շահ-Սլեյման թագաւորէն րռաղամ եկաւ Երեւան Սէֆիղուլի խանին վերայ... թէ՝ Երեւանայ բերթի յարևելյան կողմն մին պարիսպ էլ քաշեն... Դարձեալ, ամեն երկիր գձեցին ջամի զօրայ, ամեն վարցն թագաւորական տվին։ Ամա առանց հաց Կ (60) դիան տվին վարցն։ Երկիր կէր, որ Ճ (100) դիան, ՃԾ (150) դիան ընկեցին։ Ավել վարարն ամեն երկիր քաշեցին»[2]։

Մի այլ տեղ նա գրում է.

«Թվին ՌՃԻԲ (1673) յուլիս մեկումն Աքուլիս այսօր Երևան Սէֆիղուլի խանի յօքմով եկին Աքուլուց ու Դաշտէն ԷՃԾ (750) մարդ ուզեցին, Երևանայ բերդի կիսատն շինեն, ինչպէս անցեալ տարին։ Լէ (37) մարդ գնաց, որ մինչի ԷՃԾ (750) մշակ բան անէ։ Աքուլիս և Դաշտն այս Լէ (37) մարդիս մարդագլուխ ԴՌ (4000) դիան տվին։ Թէ շահի փողէն էլ տան, բարի, թէ չի տան, խօվ այս է, որ տվին»[3]։

Խանության մեջ զգալի տեղ էին բռնում մուլքադարական գյուղերի համայնքներին պատկանող հողային տարածությունները և մասամբ իրենց՝ մուլքադարների անմիջական իրավունքի տակ եղած հողամասերը։ Մուլքադարական անմիջական տնտեսությունները, այսինքն՝ մուլքադարի կամ նրա վերակացուի անմիջական ղեկավարությամբ և արտադրական միջոցներով վարվող տնտեսությունները, ինչպես իրենց ծավալով, նույնպես և իրենց տեսակարար կշռով ու ընդհանրապես երկրի տնտեսության մեջ ունեցած նշանակությամբ զգալի տեղ չէին գրավում։

«Մուլքադարը,— ասում է Ի. Շոպենը,— չէր կարող իրեն տեր համարել մուլք գյուղի որևէ մասի, հողի և բնակիչների, նա միայն մասնակից էր սրանցից ստացված եկամտի... Նրան արգելվում էր գյուղացիների վրա որևէ անմիջական ազդեցություն ունենալ. Նրա ամբողջ իրավունքը սահմանափակվում էր նրանով, որ հողի արտադրանքի հավաքումից հետո նա կարող էր պահանջել սարքյարից իրեն հասանելիք բաժինը գյուղական ամբարից, ինչպես նաև հարկային գումարներից, որոնք հավաքվում էին մուլքադարական գյուղերից։ Եթե մուլքադարը ցանկանում էր ինքը մշակել իր համար որևէ հողամաս, ապա պի-

[1] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, մասն երկրորդ. հոդված 1։

[2] Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Արմֆանի հրատ., Երևան, 1938, էջ 112—113։

[3] Նույն տեղում, էջ 119։

ոի սարդարից թույլտվություն ստանար, իսկ աշխատելու համար վարձեր գյուղացիներից բանվորներ նրանց բարի կամքով (ընդգծումը իմն է—Բ. Հ.), իսկ եթե մուլքադարն ապրում էր նույն գյուղում, որտեղ նրա մուլքն էր, այս դեպքում նա հողի հասարակական բաժանումների ժամանակ մյուս գյուղաբնակներին (поселяне) հավասար ստանում էր իր անձնաբաժին (душевой участок) հողը, ոչ որպես կալվածատեր, այլ որպես սովորական գյուղական»[1]։

Ինչպես տեսնում ենք՝ այս բնագավառում վարձու բանվորական ուժի կիրառման առիթներ և պայմաններ կան, միայն, անշուշտ, նույնպես սահմանափակ, որովհետև նախ մուլքադարներից շատերը չէին, որ ապրում էին գյուղում և, եթե ապրում էին, ապա զանազան զարտուղի ճանապարհներով օգտվում էին գյուղացիների ձրի բանվորական ուժերով. բացի այս, նրանց տրամադրության տակ գտնված հողերը քիչ էին և մեծ մասամբ կազմում էին այգիներ, բանջարանոցներ և խոտհարքներ. իսկ այս տեղերում, գլխավորապես կիրառվում էր չարեքդարական սիստեմը։

Վարձու բանվորական ուժի կիրառման բավական լայն ասպարեզ կարող էր բացվել XVIII դարում արդեն զգալի տեղ բռնող հարուստ տնտեսություններում, երկրի գլխավորապես դաշտային մասերում, որտեղ տեխնիկական մի շարք աշխատակուլ մշակույթներ, ինչպիսիք են՝ բամբակինը, վուշինը, չալթուկինը և այլն, զգալի տեղ էին գրավում։

Դեռևս XVIII դարում վերոհիշյալ Զաքարիա Ագուլեցի վաճառականն իր այգին տնկելու և բերքատվության հասցնելու համար առաջին հինգ տարում «մինչև 2000 մշակ»[2] էր բանեցրել, ինչպես գրում է նա իր «Օրագրության» մեջ[3]։ XVIII դարի երկրորդ կեսին և XIX-ի սկզբին մուլքադարները և գյուղի հարուստները հաճախ տնկում էին նման այգիներ, որոնց վրա կատարված աշխատանքը տարվում էր մեծ մասամբ վարձու մշակների միջոցով։ Ճիշտ է, արդեն հասած այգիները մշակման էին հանձնվում կատեպաններին (բաղմաններին, բաղվանչիներին), այգու բերքի մի մասը նրանց հատկացնելով, սակայն այգին փորելու, էտելու, թաղելու, բաղհանելու և նման աշխատանքները, ըստ մեծի մասին, կատարվում էին վարձու բանուժի միջոցով, մանավանդ այն դեպքերում, երբ այգին մեծ տարածություն էր բռնում։

Անհրաժեշտ է դիտել, որ ունևոր տնտեսություններում վարձու աշխատանքի ընդարձակմանը խանգարում էին վաշխառուական շահագործման մի բանի հանրածանոթ եղանակներ, որոնք կիրառվում էին գյուղում բավական լայն չափերով. այսպիսիք էին, օրինակ, վաշխառուական տոկոսների փոխարեն չքավորին աշխատանքի հարկադրելը՝ վաշխառուի տնտեսության մեջ, չքավոր գյուղացու «հողի երեսը» մեկ կամ մի քանի տարով վերցնելը և նրան ստիպելը իր իսկ հողը մշակել կիսարարի սկզբունքներով և այլն։

Սիջակ և չքավոր տնտեսություններն աշխատակուլ մշակույթների համար կիրառում էին այսպես կոչված փոխնակային եղանակը. սրա էությունն այն էր, որ բանվոր ձեռքերի անմիջական, սուր կարիք զգացող տնտեսությունը

---

[1] И. Шопен, նշվ. աշխ., էջ 926։

[2] «Մշակ»-ն այստեղ պետք է հասկանալ «բանվորական օր» իմաստով, մշակ բառը այս իմաստով գործածված է նաև XVIII դարի Էջմիածնի վանական տնտեսության տաղիվներում։

[3] Զաքարիա Ագուլեցի. Օրագրություն, էջ 116։

դիմում էր իր հարևաններին և նրանցից փոխ էր վերցնում բանվորական օրեր և ապա նրանց համար հարկավոր ժամանակին իր բանվորական ուժը տրամադրում նրանց, որպես հատուցումն փոխի։ Այս ձևը մեր գյուղերում կիրառվում էր մինչև կոլխոզային շինարարության սկիզբը։ Փոխնակային այս եղանակը, անշուշտ, սահմանափակում էր վարձու բանուժի կիրառումը։

Երևանի խանության մեջ բացառիկ տեղ էր գրավում Էջմիածնի վանական տնտեսությունը, որի պատմա-տնտեսագիտական հետազոտությունը մենք տվել ենք ռուսերեն լեզվով գրած «Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв.» աշխատության մեջ, ուստի այստեղ հարկ չենք համարում մանրամասնորեն կանգ առնել դրա վրա։ Նշենք միայն, որ այստեղ յուրահատուկ պայմանների շնորհիվ, բավական լայն կիրառումն ուներ վարձու և կիսավարձու բանվորական ուժը։ Էջմիածնի տնտեսությունը խոշորագույնն էր Երևանի խանության մեջ։ Նա ընդգրկում էր իր մեջ ոչ միայն բավական խոշոր լատիֆունդիալ մի տնտեսություն իր բոլոր օժանդակ ձեռնարկումների հետ միասին, մեծ տարածությամբ այգիներ, ջրաղացներ, դինկեր, ձիթհաններ և այլն, զգալի թվով մուլքաղարական և թիուլական գյուղեր, որոնցից նա ստանում էր բահրա և մուլք, նա զբաղվում էր նաև առևտրաբանկային գործառնություններով, տարածելով իր գործունեության շրջանակը մինչև Հնդկական և Ատլանտյան օվկիանոսի ափերի վաճառաշահ քաղաքներում տեղ գտած հայ գաղթավայրերը։ Ընդարձակ և բազմակողմանի մի այսպիսի տնտեսություն, որը բացի իր տնտեսական եկամուտներից, ստանում էր խոշոր միջոցներ նաև արտատնտեսական աղբյուրներից (ուխտավորներից, նվիրատվություններից, «աթոռահասից», «պտղից» և այլն), բնականաբար չպիտի կարողանար բավարարվել գյուղացիների կողմից վճարվող կոռային ռենտայի մնացուկներով, ինչպիսիք էին, օրինակ, գյուղացիների պարտավորությունը յուրաքանչյուր ընտանիքից մի-մի հնձվոր տալու, բերքը տեղափոխելու և նման մի քանի, համեմատարար չնչին նշանակություն ունեցող պարտավորությունները։

Գյուղատնտեսական մեծ աշխատանք կլանող կուլտուրաների (բամբակ, չալթուկ և այլն) ծավալումը պահանջում էր մեծ քանակությամբ սեզոնային բանվորական ուժ, սրա կողքին՝ կրոնական և տնտեսական նշանակություն ունեցող խոշոր շինարարությունները նույնպես պահանջում էին բանուժ թե՛ սև, և թե՛ որակավոր աշխատանքների համար։ Այս բոլորից հասկանալի է, թե ինչու Էջմիածնի վանքի բանեցրած բանվորական ուժը, ինչպես ցույց են տալիս հաշվեմատյանները, հաճախ անցնում էր տարեկան քսան հազար բանվորական օրից։

Բարեբախտաբար Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի արխիվում մնացել է Էջմիածնի տնտեսության հաշվեմատյանների մի ստվար մասը, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու և պարզաբանելու պատմա-տնտեսագիտական մի շարք կարևոր խնդիրներ, որոնցից մեկն է նաև աշխատավարձի հարցը, որին նվիրված է հոդվածս։

Կարելի է տարակուսել այն բանում, թե Էջմիածնի վանական տնտեսության հետ կապված տվյալները աշխատավարձի և գների վերաբերյալ կարելի է հատկանշական համարել նույն ժամանակաշրջանի Երևանի խանության այլ տնտեսությունների աշխատավարձային և առևտրական հարաբերությունների համար, թե՞ այդ վանական տնտեսությունը առանձնահատուկ պայմաններում

էր գտնվում, ուստի և այդ տվյալները ու նրանցից բխող եզրակացությունները որևէ չափով չի կարելի տարածել Երևանի խանության մեջ եղած նման հարաբերությունների վրա։

Անտարակույս, էջմիածնի տնտեսությունն ուներ իր առանձնահատկությունները։ Էջմիածնի վանքն ուներ Վաղարշապատի պես մեծ գյուղ, որին նա տիրում էր թիուլական իրավունքով, մի շարք այլ գյուղեր՝ Օշական, Եղվարդ և ուրիշներ, որոնց նա տիրում էր մուլքադարական իրավունքով։ Սրանց բնակչությունից նա կարողանում էր այլևայլ ապօրինի միջոցներով բանվորներ հանել և աշխատեցնել իր տնտեսության մեջ։ Սակայն, նյութերի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ վարձու մշակների կոնտինգենտը մեծ մասամբ բաղկացած էր օտար վայրերից եկած կամ, առնվազն, ոչ էջմիածնապատկան մուլքային գյուղերի բնակչությունից։ Վարձու մշակների մեջ հաճախ են պատահում Թուրքիայի՝ Երևանի խանությանը կից փաշայությունների հայ բնակիչներ, մինչև իսկ թուրքեր և քրդեր։ Սրանց նկատմամբ էջմիածինը որևէ բռնություն գործադրել չէր կարող. սրանք ազատ, պայմանային կարգով աշխատող մշակներ էին։ Բացի այս, թիուլային գյուղերի բնակիչների պարտքն էր, ըստ ժամանակի սովորությունների, միայն մի քանի կարգի աշխատանքներ հարկադրաբար կատարել թիուլդարի համար, ինչպիսիք են՝ հացահատիկների հունձը, բերքի փոխադրումը և այլն։ Այլ աշխատանքները նրանք կատարում էին, ճիշտ է, երբեմն ապօրինաբար. բռնի կարգով, բայց նրանց վճարվում էր աշխատավարձ ընդհանուր կարգով։ Ինչպես պարզվում է տվյալներից, էջմիածնին որպես մուլք պատկանող գյուղերի բնակիչներից մշակ վարձվածների և այլ տեղերից եկածների աշխատավարձի միջև տարբերություն չկա, կամ դա չնչին է։

Բերենք մի օրինակ, որը քաղում ենք 1768 թվականի հաշվեմատյանից (թղթ. 111, վավ. 8)։

«Եղուարդայ առու հանող մշակքն եղեն ՃՂԹ (199) հոգիք, որոց ՃԼԸ (138) հոգւոյն օրն Ժ (10) փարայով (=167 դիան), եառ Բ (2) թուման ԳՌ (3000) դիան. ԿԱ (61) հոգի գեղացվոցն օրն Ա (1) ապասեաւ (=200 դիանի—Բ. Հ.) խօշկամուզդ. եառ Ա (1) թուման ԲՌԲՃ (2200) դիան. ջամն է Գ (3) թուման ԵՌԲՃ (5200) դիան»։

Այստեղ դիտողության արժանի է այն, որ էջմիածնի վանքը, որ Եղվարդ գյուղի մուլքադարն էր, գյուղի առվահանի աշխատանքի համար անգամ վարձ է վճարում նույն գյուղի այն բնակիչներին, որոնք մասնակցում են առվահանին։

Նույն դավթարի մի այլ հատվածում ասված է.

«Դռի և բոլոր մեր այգեաց մեր գեղացւոց մշակքն էւորքն եղեն ՇԺԵ (515) մշակք խօշկամուզդ (այսինքն՝ առանց օրական սնունդը տալու, սնունդը մշակի հաշվին — Բ. Հ.). մին օրն Ժ (10) փարայով. որոց վարձքն եառ Ը (8) թուման ԵՃԸՃԶԳ (5835)[1] դիան։ Սոցա ԽԷ (47) մշակքն ուշկնեցիք (=օշականցիք—Բ. Հ.) են և այլք մեր գեղացիք (=վաղարշապատցիք—Բ. Հ.)։

Այս հանդամանքները թույլ են տալիս էջմիածնի վանքի տնտեսության վերաբերյալ հարուստ տվյալներ օգտագործելու Երևանի խանության մեջ սոցիալ-տնտեսական որոշ հարաբերությունների և, մասնավորապես, վարձու աշխատավարձի ուսումնասիրության համար։

---

[1] Պետք է լինի ԵՌԸՃԼԵ, եթե 5835 թիվը ճիշտ է (խմբ.)։

ՎԱՐՁՈՒ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԿՈՆՏԻՆԳԵՆՏԸ

Հարց է ծագում, թե գերիշխող նատուրալ տնտեսության պայմաններում որտեղի՞ց էր կոմպլեկտավորվում այդ վարձու բանվորական ուժը։ Այս հարցին պատասխանելու համար առաջին հերթին պետք է հաշվի առնել սոցիալ-տնտեսական այն կացությունը, որի մեջ էր գտնվում Երևանի խանության և հարևան շրջանների գյուղացիությունն այս ժամանակաշրջանում։

XVIII դարը Երևանի խանության համար քաղաքական աղետների մի շրջան էր։ Թուրք-պարսկական պատերազմները դարի առաջին կեսին, լեզգիների հաճախակի ավերիչ և ահաբեկիչ ասպատակությունները, Իրակլի թագավորի կրկնակի արշավանքները ցան ու ցրիվ էին արել գյուղական բնակչությունը, և իր վաղվա օրվան անվստահ գյուղացին շատ անգամ գերադասում էր աշխատել չնչին աշխատավարձով, մինչև իսկ «հացփորի», քան նորից վերադառնալ իր ավերված տնտեսությունը։ Այս երևույթը տարածվում էր ոչ միայն Երևանի խանության, այլև հարևան թուրքական փաշալղների (Բայազետի, Կարսի, Ախալցխայի և այլն) վրա։ Այս կարգի աշխատավորությունը մեծ մասամբ վարձվում էր համեմատաբար երկարատև ժամանակով՝ տարով կամ սեզոնով։

XVIII դարի երկրորդ կեսին Երևանի խանության գյուղացիության մեջ արդեն զգալի շերտավորում կար։ Այդ նկատվում էր առանձնապես դաշտային և նախալեռնային շրջաններում ընկած գյուղերում, որտեղ տարածված էր աշխատանք կլանող տեխնիկական բույսերի և խաղողի մշակությունը։ Այս մշակություններն ավելի շուտ էին կապվում շուկայի պահանջների և դրամական շրջանառության հետ։ Ճիշտ է, չքավոր գյուղացիությունը շահագործվում էր ունևորների կողմից ֆեոդալական միջավայրին հատուկ ձևերով — հողերը կիսու տալով, վաշխառուական տոկոսների փոխարեն մշակություն անելով ունևոր վաշխառուի տանը և այլն, սակայն չքավոր և կիսաչքավոր գյուղացիության որոշ մասը իր տնտեսությունից դուրս աշխատում էր նաև օրավարձով։ Այս նրա համար հիմնական աղբյուր չէր, բայց որոշ չափով օժանդակում էր նրա տնտեսությանը։ Այսպես՝ վարձու աշխատավորության երկրորդ և կարևոր աղբյուրը չքավոր գյուղացիությունն էր։

Դաշտային գյուղերի համար բանվորական ուժի երրորդ աղբյուրն էր հանդիսանում լեռնային շրջանների գյուղացիությունը։ Լեռնային գյուղերի բնակիչները գլխավորապես պարապում էին անասնապահությամբ և հացահատիկային մշակություններով, որոնք համեմատաբար քիչ աշխատանք են պահանջում, քան տեխնիկական մշակությունները դաշտային շրջաններում։ Բացի այս, լեռնային շրջաններում հացահատիկներն ավելի ուշ են հասնում, ուստի և այստեղի բանվորական ուժը հնարավորություն ուներ մասնակցելու դաշտային մասի բերքահավաքի աշխատանքներին, մինչև իրենը կհասներ։

Վարձու բանվորական ուժի չորրորդ և ավելի կարևոր աղբյուրն էր հանդիսանում (մանավանդ Էջմիածնի տնտեսության համար) թիուլական գյուղերի բնակչությունը, որի վրա թիուլդարը հնարավորություն ուներ որոշ բռնություն գործ դնելու, իր համար թեկուզ վարձով աշխատեցնելու։ Այս կողմից շատ բնորոշ են Էջմիածնի վանքի գործողությունները Վաղարշապատ գյուղի բնակիչների նկատմամբ, որի ցայտուն նկարագիրը կարելի է տեսնել վաղարշապատցի

«Հարություն Արարատյանի կյանքը» ինքնակենսագրական բնույթի գրվածքում[1], որը վերաբերում է XVIII դարի երկրորդ կեսին։

Գյուղատնտեսական տեխնիկայի ցածր մակարդակի հետևանքով որակյալ բանվորական ուժի մեծ պահանջ չկար. այստեղ դեր էր կատարում ոչ այնքան գիտությունը և վարժականությունը, որքան ֆիզիկական ուժը և դիմացկունությունը։ Որակյալ բանվորներ էին համարվում գյուղատնտեսության ասպարեզում կատեսանները (բաղվան, բաղվանչի, այգեպան), բոստանչիները և սրանց նմանները, որոնք տարիների փորձ ունեին տվյալ ասպարեզում։ Սրանք աշխատում էին մեծ մասամբ ոչ օրավարձով, այլ սեղոնով կամ չարեքղարային սկզբունքով։ Բացի սրանցից որակավոր էին գյուղատնտեսությանն սպասարկող արհեստավորները՝ դարբին, խառատ և այլք, իսկ շինարարության մեջ՝ որմնադիրը, նախշքարը, հյուսնը։

Այս արհեստավորները, որոնք մեծ մասամբ սպասարկում էին երկրագործությանը, ֆեոդալական միջավայրի նատուրալ տնտեսության պայմաններում համեմատաբար բարձր աշխատավարձ էին ստանում և մեծ հարգանքի արժանանում։ Դեռևս XII դարում Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում արհեստների մասին գրում էր. «Հարկաւորք և օգտակարք յարուեստս հողագործութիւն է և դարբնութիւն և հիւսնութիւն և բաղմաց է հողագործել. առաւել պատուիցի երկաթագործ և փայտագործ»[2]։ Այս կարգի անուն հանած արհեստավորները հաճախ հրավիրվում էին հեռու վայրերից, մնում նոր տեղում բավական երկար ժամանակ, ստանում էին լավ աշխատավարձ և պատվով ու նվերներով վերադառնում իրենց հայրենիքը։

ՎԱՐՁԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՁԵՎԵՐԸ

Երկրագործական բանվորները վարձվում էին սովորաբար սեղոնով և օրով. հազվագյուտ դեպքերում՝ նաև տարով։ Սեղոնային էին, օրինակ, ձմեռային և ամառային մշակները կամ հոտաղները, նախրչիները, բոստանչիները, կատեսանները։ Ամառային սեղոն էր համարվում մշակների համար վաղ գարնանից՝ բարեկենդանից, որոշ վայրերում «միջինք»-ից[3] մինչև ուշ աշունը՝ «նախրաթող»[4]։ Սեղոնային աշխատողները ստանում էին կամ որոշակի աշխատավարձ՝ դրամով, թե բնամթերքով, ինչպես օրինակ՝ հոտաղները, կամ թե՝ բերքի որոշ մասը, ինչպես օրինակ՝ կատեսանները, բոստանչիները և ուրիշներ։ Աշխատավորների որոշ կատեգորիաներ, ինչպես օրինակ՝ հնձվորները, այդի կթողները և ուրիշներ ստանում էին հավաքած բերքի որոշ տոկոսը։

«Բերքահավաքին,— գրում է Ի. Շոսլենը,— արտադրանքի մի մասը պահվում էր հօգուտ հնձվորների, թեկուզ և այդպիսին ինքը՝ հնձատերը լիներ։ Այդ մասը կազմում էր՝ ցորենից և գարուց — 1/10 մասը, իսկ չալթուկից և բամբակից — 1/20-ականը»[5]։

---

[1] «Հարություն Արարատյանի կյանքը», թարգմ. Պ. Պողոսյանի, Թիֆլիս, 1892։

[2] Մ. Գոշ, Դատաստանագիրք հայոց, 2-րդ մաս, գլ. 1։

[3] «Միջինք» կոչվում էին «մեծ պասի» 4-րդ շաբաթվա օրերը։

[4] «Նախրաթող» էր կոչվում նախիրը թողնելու ժամանակը, որն ընկնում էր սովորաբար նոյեմբերի վերջերին, դեկտեմբերի սկզբներին. այսինքն՝ այն ժամանակ, երբ դաշտային աշխատանքները բոլորովին վերջանում էին։

[5] H. Шопен, նշվ. աշխ., էջ 1131։

Սեզոնային աշխատավորների որոշ կատեգորիաներ, ինչպես օրինակ, հոտաղները, ստանում էին սնունդ, ինչպես նաև հագուստ, որը սովորաբար բաղկացած էր մեկ չուխայից, մեկ գդակից, շորի գոտուց, մեկ շալվարից, մի զույգ ոտնամանից («հեսկիք») և 20 «գազ» կտավից։ Բնականով տրվող այս հագուստեղենի փոխարեն կարող էր վճարվել նաև նրա արժեքը դրամով։ Էջմիածնի հաշվեմատյանների մեջ հանդիպում ենք այսպիսի հոդվածների.

1. «Ե (5) ապասի Ետու մշակ Անդրէասին հեսկուն, գոտուն, շալվրին և Ի (20) գազ կտավի գին»։

2. «Ը (8) ապասի շահրիարցի մշակ Մկրտչին հին տարէն. Դ (4) ապասի Ետու չուխին և գտակին»-ը (1739 թ. հաշվեմատյանից)։

Սնունդ և հագուստ ստանում էին նույնպես տարով վարձվածները։ Այսպես, 1800 թ. հաշվեմատյանում, հոկտեմբերի 6-ի տակ կարդում ենք. «Ամալայից աղագաւ մաշիկ կարել Ետուք ԳՃ (300) ջուխտ», իսկ 1750 թ. հաշվեմատյանում, հոկտեմբերի 8-ի տակ՝ «Գտակ կարել Ետու մշակաց. վարձն Ետու մի հազար հինգ հարիւր դիան»։

Աշխատանքային օրվա տևողությունը գյուղատնտեսական բանվորի, ինչպես նաև օրավարձով աշխատող արհեստավորի համար ձգվում էր արևածագից մինչև արևամուտը։ Արարատյան դաշտի աշխարհագրական-կլիմայական պայմաններում ամառվա ամիսներին այդ տևողությունը հասնում էր օրական 14—15 ժամի։

Գյուղատնտեսական բանվորները աշխատանքի էին գնում իրենց գործիքներով. փորվորն իր բահով, էտվորն իր մկրատով, քաղհանավորն իր ուրագով, հնձվորն իր գերանդիով կամ մանգաղով։ Բացառություն էին կազմում հոտաղները, մաճկալները և նման կարգի մշակները, որոնք չէին աշխատում բացառապես մի գործիքով, կամ գործ ունեին գութանի, արորի և սրանց նման արտադրական խոշոր ու թանկարժեք գործիքների հետ. այսպիսի գործիքները գործատիրոջն էին պատկանում։ Արխիվային հաշվեմատյաններում հանդիպում ենք այնպիսի օրինակների, երբ բանվորի աշխատավարձից հանվում էր որոշ գումար այն դեպքերում, երբ նա աշխատում էր գործատիրոջ գործիքով։

1743 թվականի Եկեմտից դավթարի մեջ կարդում ենք հետևյալը.

«Ետու նոյն Գ (3) այգեաց փորվոր ԱՌԱՃԿԱ (1161) մշակաց Թ (9) փողով, ԻԴ (24) շայիրշոց Գ (3) փողով նոյն վարդապետաց ձեռօք, բայց ԵՃԻԴ (524) բահ մեր էր, Ա.Ա. (մեկ-մեկ) փող բահագլուխ կտրեցաք»։ Գործատերը, ըստ հին սովորության, պարտավոր էր կերակրել բանվորին, իսկ եթե չէր կերակրում՝ պարտավոր էր որոշ գումար «հացագին» տալ նրան։ Էջմիածնի 1767 թ. հաշվեմատյանում (թղթ. 2, վավ. 4) կարդում ենք.

«Լուծ քշողք եղեն Գ (3), մին Դ (4) փարայով. Բ (2) փարա ևս հացագին Ետու»։ Մեր ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանում, առավելապես վերջին տասնամյակների ընթացքում, ավելի հաճախակի են պատահում բանվորներ, որոնք աշխատում են «հացն իրենց» (իրենց հացով) կամ «խոշկամուզդ»։ Այսպիսի դեպքերում նրանց օրավարձի մեջ մտնում է նաև «հացագինը», թեև հաշիվների մեջ բուն աշխատավարձը և հացագինը դիֆերենցիացիայի չեն ենթարկվում։ Հասկանալի է, որ «խոշկամուզդ»-ով աշխատողն ավելի էր ստանում փողով, քան նա, ով աշխատում էր գործատիրոջ հացով («մեր հացովն»)։

Պետք է նշել, որ «հաց» հասկացողությունն ընդգրկում էր աշխատավորի օրական ամբողջ սնունդը։

Հետաքրքրական է, որ բնամթերքով ստացող գործարքային բանվորը կարող էր հրաժարվել իր վարձը մթերքով ստանալուց, եթե այդ մթերքն անորակ էր, կամ որևէ բնական աղետի հետևանքով բերքը փչացել էր։

Էջմիածնի հաշվեմատյանների մեջ պատահում ենք այս կարգի հոդվածների.

1. «Արտորայքն մեր ցորեան թէ գարի հնձել ետուք, որոց հնձուորքն իւրեանց վարձն խուրձն չառին վասն կարկուտ տալուն, այլ Ռ(1000) խրձանն ԲՌԵԾ (2500) դիան՝ վարձն դրամով ետուք, որք էին հնձեալ ԽԸՌԹՃԾ (48950) խուրձն, որոյ հնձելավարձն ետուք... ԺԲ ԲՌԳՃՀԵ դն. (12 թուման 2375)» (սեպտ. 28, 1768 թ.)[1]։

2. «Կատեպանացն մերոց՝ թէ տեղւոյս (Վաղարշապատի—Բ. Հ.) թէ Յօշականայ, թէ Փարաքարայ, և թէ Նորագեղայ, վասն այգեաց ցրտահարութեան նաղտ ետուք զեհախսն. տեղվոյս ԺԵ (15) կատեպանացն ԸՌ (8000) դիանիւ, ետու Ը (8) թուման, ԸՌ (8000) դիան»[2]։

Խիստ ուշագրավ է գործատիրոջ «հացով» և «խոշկամուզդ» (իր՝ աշխատող բանվորի «հացով») աշխատողների օրավարձի փոխհարաբերությունը։ Որպեսզի կարելի լինի քիչ թե շատ պարզ և համեմատաբար ճիշտ գաղափար կազմել այդ մասին, բերում ենք մի քանի օրինակներ, որոնք վերաբերում են տարբեր տարիների։

Այսպես.

1759 թ. (թղթ. 2, վավ. 4).

«Նորագեղի մի այգուց ՁԸ (88) փորող մշակաց ետու վարձ Գ (3) շահի և կիսով (=175 դիանի) խոշկամիւզդ մին թուման հինգ հազար ԴՃ (400) դիան ի սոյն (մարտ) ամսոյ քսան վեցին»։

«Այս այգւոյ էտող մշակքն են ԾՁ (56), որոց վարձն ևս տուաք Գ (3) շահի և կիսով. նոքա ևս են խոշկամիւզդի»։

Հետևյալ հոդվածում կարդում ենք.

«Ղոի այգւոյ փորող ԳՃԳ (303) մշակաց վարձ ետու Դ Դ (չորս-չորս) փարայով. տուաք երկու թուման երկու հարիւր դիան ի սոյն (մարտ) ամսոյ ԺԻ (17-ին)»։

Չորս փարան $4 \times 16^2/_3$ դիան $= 66^2/_3$ դիան ≈ 67 դիան։

Այս տվյալներից անում ենք այն հետևությունը, որ 1) խոշկամուզդ կամ հացն (սնունդը) իր հաշվին աշխատող մշակը ստանում է $\frac{175}{67}$ կամ մոտավորապես 2,5 անգամ ավելի, քան «հացը գործատիրոջ հաշվին» աշխատող մշակը, և 2) մեկ մշակի օրական սնունդը հաշվվում էր 175 դն.—67 դ.=108 դիան։

1766 թ. (թղթ. 2, վավ. 4).

1. «Ղոի այգւոյ թաղորքն Բ (2) շավթէն եղև ԵՃԻԲ (522) մշակք. մին Է (7) փարայով (=117 դիան), որոց ետուք վեց թուման ԹՃ (900) դիան, նոյ. 5-ին»։

2. «Ուշականա այգեաց թաղորքն եղեն ՃՂԴ (194) մշակ խոշկամուզդ, այն Դ (3) շահով (=150 դիան) որոց ետուք Բ (12) թուման ԹՌԱՃ (9100) դիան»։

Տարբերությունը՝ 23 դիան։

---

[1] Թղթ. 3, վավ. 8, էջ 27։

[2] Նույն տեղում, էջ 363։

1767 թ. (թղթ. 2, վավ. 4).

1. «Բամբկի քաղհանաւորք եղեն ԲՃԾԲ (252) մշակք. մին մշակն Դ (4) փարայով (= 67 դիան)...»։

2. «Փարաքարայ այգւոյ քաղհանաւորք եղեն ԺԴ (14) մշակ. մին մշակ Դ (3) շահով (= 150 դիան) խոշկամուղդ...»։

Տարբերությունը 83 դիան։

1786 թ. (թղթ. 3, վավ. 8).

«Աշտարակայ երկու այգեաց փորողքն ՀԴ (74) հոգիք խոշկամուղդ օրն Ա (1) ապասով (= 200 դիան) ետու Ա ԴՌԸՃ դիան (1 թուման 4800 դիան)»։

Մանրություն. այս կարգի մյուս բոլոր մշակներն էլ ստացել են խոշկամուղդ, մեծ մասամբ մեկ ապասի (200 դիան), երբեմն էլ՝ ԺԳ (13), ԺԴ (14) և ԺԵ (15) փարա, որը դիաններով հաշված՝ կլինի 217, 233 և 250 դիան։ Մինչդեռ «մեր հացովն» (այսինքն՝ վանքի, գործատիրոջ հացով) աշխատողներն ստացել են մեծ մասամբ Բ շահի (= 100 դիան), երբեմն էլ՝ Է (7) փարա (= 117 դիան)։

Տարբերությունը — 100 — 133 դիան, կամ ավելի՝ մոտ 2 անգամ։

1811 թ. հոկտ. ամսի 19-ին (թղթ. 20, վավ. 211).

Այդի թաղող մշակներին վճարված է օրավարձ՝ առանց հացի (խոշկամուղդ) — ԵՃ (500) դիան, հացը վանքից (գործատիրոջից) — ԲՃ (200) դիան։

Մանրություն. հացը գործատիրոջից 200 դիան աշխատավարձն ընդհանուր է նաև մարգոսավորների, փայտ կտրողների և նման մշակների համար.

Տարբերությունը — 150 դիան, «խոշկամուղդ»-ը 2,5 անգամ ավելի է «հացը գործատիրոջից» աշխատավարձի համեմատությամբ։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ԵՎ ՇԱՐԺՈՒՄԸ

Աշխատավարձի չափի և նրա շարժման ուսումնասիրությանը նպաստող մեր ձեռքի տակ եղած նյութերը վերաբերում են գլխավորապես էջմիածնի վանական տնտեսությանը և ընդգրկում են մոտ 80 տարվա ժամանակաշրջան։, այն է՝ 1740-ական թվականներից մինչև 1820-ական թվականները, այսինքն՝ մինչև Երևանի խանության Ռուսաստանին միանալու նախօրյակը։ Թե որքան հնարավոր և ընդունելի է օգտագործել այդ տվյալները Երևանի խանության մեջ տարածված վարձու աշխատանքային և աշխատավարձային հարաբերությունների պարզաբանման համար, այդ մասին մենք խոսել ենք վերևում։ Ավելացնենք այն, որ էջմիածնի ելևմտից մատյաններն ընդհանուր առմամբ տարված են բավական խնամքով և ժամանակի հաշվապահական կանոնների համաձայն։ Բացի աշխատավարձի մասին տվյալներից, այնտեղ մենք գտնում ենք այդ տարիների վերաբերյալ առաջնակարգ անհրաժեշտության սննդամթերքների (գարի, ցորեն, բրինձ, միս, յուղ և այլն), հագուստեղենի (կտավ, գլխարկ, ոտնաման և այլն), գործիքների և կենցաղի ու տնտեսության մեջ գործածվող այլ իրերի գներ։ Աշխատավարձի և գների վերաբերյալ այս նյութերը լրիվ չեն յուրաքանչյուր տարվա համար. նրանք պատահական են և անսիստեմատիկ գրված, բայց բավականին շատ են և բազմակողմանի. նրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բավական մոտավոր պատկեր ստանալ աշխատավարձի չափի և շարժման մասին։

Աշխատավարձը և գները էջմիածնի «դավթարներում» նշանակված են Երևանի խանության սահմաններում այդ ժամանակ շրջանառության մեջ գտնվող իրանական (թուման, հազարդիան կամ միլալթուն, ասպասի, շահի, դիան, փող) և թուրքական (դուրուշ, փարա) դրամական միավորներով։ Հաշվապահության մեջ հանրագումարներ տալը հեշտացնելու համար թուրքական դրամները վեր են ածված համապատասխան իրանական դրամների, գլխավորապես դիանների։

Աշխատավարձի շարժումը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա աշխատավարձի միջինը որոշել ըստ աշխատավորների կատեգորիաների։ Հայտնի է, որ օրավարձով աշխատողների, մանավանդ գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը զգալի տատանումներ է ունենում ըստ սեզոնի, ըստ տեղի և ըստ աշխատանքի որակի։ Մեր ունեցած նյութերը թեև բավական շատ են, բայց թե՛ ըստ քանակի, և թե՛ ըստ բազմազանության, հնարավորություն չեն տալիս գիտական մեթոդներով աշխատավարձի միջինը որոշելու. ուստի, տարեկան միջին ենք համարում տվյալ կատեգորիայի բանվորների համար այն աշխատավարձը, որն ավելի հաճախակի է կրկնվել։ Ինչ վերաբերում է աշխատավարձի տատանումներին Երևանի խանության մեջ ըստ գավառների, ապա այդ որոշելու հնարավորության բացակայության պայմաններում, մենք որպես միջին ընդունում ենք Վաղարշապատին, Օշականին և մոտակա գյուղերին վերաբերող տվյալները, որոնք մեզ թվում է, շատ հեռու չպետք է լինեին իսկական միջինից, քանի որ այդ վայրերը ոչ քաղաք են, և ոչ էլ հետամնաց գյուղեր։

Գյուղատնտեսական աշխատավորներին կարելի է խմբավորել հետևյալ կատեգորիաների մեջ։

Առաջին կատեգորիա — *այգու և բանջարանոցի փորվորներ, էտվորներ, մարգոսավորներ և նման ոչ որակավոր աշխատանք կատարողներ։ Սրանց աշխատավարձը, ինչպես ցույց են տալիս նյութերը, իրարից համարյա չեն տարբերվում։*

Երկրորդ կատեգորիա — *քաղհանավորներ, ադունավորներ, բրինձ ընտրողներ և այլն։ Սրանք համարյա բացառապես կանայք են, եթե չհաշվենք չալթուկի քաղհանավորներին, որոնք, ըստ մեծի մասին, տղամարդիկ են, ուստի և ստանում են համեմատաբար ավելի բարձր աշխատավարձ։*

Երրորդ կատեգորիա — *լուծ քշողներ, «դուշ քշողներ», չայիր (մոլախոտ) հավաքողներ և նմաններ։ Սրանք մեծ մասամբ պատանի, երբեմն՝ մանուկ աշխատավորներ են։*

Չորրորդ կատեգորիա — *գյուղատնտեսությանն սպասարկող արհեստավորներ՝ խառատներ (հյուսներ), նալբանդներ և այլն, սրանց թվում են նաև շինարարական վարպետները՝ որմնադիրները (բաննահները)։*

Հինգերորդ կատեգորիա — *մանր ապրյունագործական (դինկի, ջրաղացի, շրեխի և այլն) մշակներ։*

Անհրաժեշտ է նկատի առնել, որ որոշ կարգի գյուղատնտեսական աշխատավորներ, թեև կատարում են հատուկ որակ չպահանջող, սակայն դժվարին և մեծ եռանդ կլանող ֆիզիկական աշխատանք։ Այդպիսիք են, օրինակ՝ գերանդի քաշող հնձվորները։ Թեև ըստ որակի կարելի էր սրանց մեր կլասիֆիկացման առաջին կատեգորիայի մեջ հաշվել, սակայն այդպես չենք վարվել. սրանք համեմատաբար ավելի բարձր աշխատավարձ են ստանում։ Միջին աշխատա-

վարձը հանելիս մենք այս կարգի աշխատավորներին հաշվի չենք առել։ Ի դեպ պիտի ասել, որ դրամով աշխատող հնձվորներ շատ քիչ են պատահում. սրանք սովորաբար ստանում են հնձածի որոշ տոկոսը։ Դրամով վճարելու դեպքում սրանց օրավարձը կրկնակի, մինչև իսկ եռակի ավելի է հասարակ բանվորի աշխատավարձից։

Կանանց վարձու աշխատանքը, ինչպես նկատեցինք վերևում, կիրառվում էր գլխավորապես բամբակի, բանջարանոցների և այգիների քաղհանի համար ու ֆիզիկական մեծ ուժ չպահանջող գործերում։ Ուշագրավ է, որ չալթուկի քաղհանավորներն ընդհանրապես տղամարդիկ էին լինում, ուստի և նրանց աշխատավարձն ավելի բարձր էր, քան բամբակի քաղհանավորներինը։ Այս երևույթը բացատրվում է նրանով, որ չալթուկի քաղհանը պահանջում էր ոտաբոբիկ, մինչև ծնկները մերկ մտնել ջրած արտը, իսկ կանանց համար այդ դիրքով տղամարդկանց երևալը անթույլատրելի էր ժամանակի բարքերի տեսակետից։

Աչքի է ընկնում կնոջ աշխատանքի վարձատրության խիստ ցածր չափը։ Քաղհանի աշխատանքը թեև բավական ծանր է, սակայն նրա վարձատրությունը սովորաբար կազմում է տղամարդ հասարակ բանվորի աշխատավարձի կեսը։ Կանայք վարձվում են սովորաբար գործատիրոջ հացով, քիչ դեպքերում միայն՝ խոշկամուղդ։ Վերջին դեպքերում նրանց դրամավճար աշխատավարձը գերազանցում է առաջիններից 50—75 տոկոսով։

Բավական հաճախ ենք պատահում դեռահասների և մանուկների վարձու աշխատանքի կիրառման։ Սրանք «լուծ են քշում» (զութանի, արորի), «չայիր հավաքում» (այգեփորից և վարելուց հետո մոլախոտեր հավաքելը), «ղուշ քշում» (ցանքի և կալի ժամանակ թռչուններ քշում) և այլն։ Սրանց աշխատավարձն ավելի ցածր է, քան կանանց աշխատավարձը։ Բերենք մի օրինակ, 1750 թվականին սրանց աշխատավարձը կազմում էր օրը 20—25 դիան, մինչդեռ կանանցը՝ 30—40 դիան, իսկ տղամարդ բանվորինը՝ 55—67 դիան։ Ճիշտ է, XIX դարի սկզբին այս աշխատավարձը բարձրանում է և հասնում 56 դիանի (խոշկամուղդը՝ 117 դիանի), սակայն այդ ժամանակ կանանց աշխատավարձը հասնում է 100 դիանի, իսկ տղամարդկանցը՝ 167—200 դիանի (խոշկամուղդը՝ 350 դիանի)։

Ուշագրավ է նաև գյուղատնտեսությանն սպասարկող արհեստավորների աշխատավարձը։ Այս կարգի արհեստավորներից, մանավանդ շինարարության մեջ, հաճախակի հանդիպում ենք բաննահին (որմնադրին) և հյուսնին։ Պետք է նկատել, որ այս կարգի արհեստավորներն ամսավարձով կամ սեզոնավարձով կարող էին աշխատել միայն խոշոր տնտեսություններում, ինչպիսին էր, օրինակ, Էջմիածնի տնտեսությունը։ Սրանց աշխատավարձը համեմատարար բարձր էր։

1774 թվականի դավթարում կարդում ենք.

«Պողոս խառատն քաղքցի ի յանցեալ յունվարէն սկսեալ մինչև ցայս յունուարիս մուտն ամառ-ձմեռ բանեալ էր. որոյ վարձն օրամուղդ (օրավարձով — Բ. Հ.) հետապ արարեալ ետուք Զ (6) թուման ԳՌԷՃՈ (3750) դիան» (թղթ. 3, վավ. 8)։

Հաշվելով տարեկան 300 աշխատանքային օր, խառատի միջին օրավարձը կլինի 63750 դ. : 300—մոտ 220 դիան։ Սրա հետ միասին խառատն ստացել է սնունդ։ Համեմատության համար հիշենք, որ հասարակ բանվորը (փորվոր,

էտվոր և այլն) ստացել է միջին հաշվով օրավարձ սննդով 2 շահի=100 դիան, առանց սնունդ (խոշկամուզդ)՝ 150 դ. = 167 դիան։ Ինչպես տեսնում ենք խառատը, որն ամբողջ տարին ապահովված էր աշխատանքով, ստանում է 2 անգամ ավելի, քան հասարակ բանվորը, որը բացի այս, ապահովված չէր մշտական աշխատանքով։

Ուշագրավ տեղեկություն ունենք նաև արհեստավորի աշակերտների աշխատավարձի մասին։

1763 թվականի դավթարում կարդում ենք.

«Ուստա Աբրահամն բանեցաւ հինգ օրն երկու հարիւր յիսուն դիանով. իսկ աշակերտն մեկ հարիւր տասն և հինգ դիանով»։

Աշակերտի աշխատավարձը, այսպիսով, ավելի քան երկու անգամ պակաս է եղել վարպետի աշխատավարձից։ Աշակերտ անվանված է այստեղ հավանորեն վարպետացուն, արդեն սովորած, բայց վարպետության կոչում չստացած աշխատավորը։

Աշխատավորի ոնալ աշխատավարձը որոշելիս խիստ կարևոր նշանակություն ունեն ապրուստի համար և կենցաղում գործածվող կենսամթերքների, հագուստեղենի գները։ Նատուրալ տնտեսության ֆոնի վրա ներքին առևտուրը լայն զարգացում ստանալ չէր կարող։ Գյուղացիական մասսան շատ քիչ էր մասնակցում շուկայական հարաբերություններին։ Ներքին առևտուրը սահմանափակված էր տեղական նեղ շրջանակներով. ուստի տարբեր մահալներում (գավառներում) միևնույն կենսամթերքի տարբեր գներ կարող էին լինել։ Ճիշտ է, էջմիածինը կապեր ուներ երկրի բոլոր գավառների հետ և նրանից դուրս, գնումներ կարող էր կատարել իր կարիքների համար այն տեղերում, որտեղ մթերքն էժան էր, սակայն ժամանակի տրանսպորտային անհարմարությունները շատ էին բարձրացնում գները, ուստի գնումները մեծ մասամբ կատարվում էին Վաղարշապատի ու Երևանի շրջակա գյուղերում և գլխավորապես տեղական մուլքադարներից ու թիուլդարներից։ Սակայն այս տեղերում էլ միևնույն տարվա ընթացքում միևնույն իրերի գների մեջ հաճախ նկատվում են բավական ուժեղ տատանումներ։ Տատանումներ են նկատվում միևնույն մթերքների գների մեջ նաև միևնույն վայրում տարբեր ամիսներին։ Այսպես, օրինակ, ցորեն, գարին և այլ հացահատիկներ ձմեռվա և մանավանդ գարնան սկզբի ամիսներին ավելի թանկ են լինում, քան ամառ՝ բերքահավաքի ամիսներին, և աշնան սկզբին։ Հացահատիկները թանկանում են նաև երաշտի, ցրտահարության և այլ արհավիրքների հետևանքով առաջացած բերքի պակասության ժամանակ։ Այս բոլոր հանգամանքները դժվարացնում են գների շարժման մեջ որոշ օրինաչափություն դրսևորելու հնարավորությունը։ Հացահատիկների թանկությունը անդրադառնում է աշխատավարձի վրա։ Մի կողմից այն դրդում է բանվոր-մշակին պահանջել ավելի աշխատավարձ, որը պիտի նպաստեր նոմինալ աշխատավարձի բարձրացմանը, սակայն, մյուս կողմից՝ վարձու աշխատանքի շուկայի խիստ սահմանափակվածությունը պիտի դրդեր օրավարձով աշխատող մշակին խուսափել խոշկամուզդ աշխատելուց և ձգտել աշխատելու «հացը գործատիրոջից» պայմանով, բավարարվելով գործատիրոջ հացի արժեքի վրա թեկուզ չնչին դրամական հավելումով. այս հանգամանքն իջեցնում էր խոշկամուզդ աշխատավարձը։ Սովի և խիստ թանկության տարիներին շատերն աշխատում էին միայն «հացփորի», այսինքն՝ միայն սնունդ ստանալով գործա-

տիրոջից։ Զաքարիա Ագուլեցու «Օրագրության» մեջ հանդիպում ենք նման մի նկարագրության։

«Թվին ՌՃԻԲ (1673) յունվար ամսոյն սկսաւ սղութիւն հացի մինչև ի յուլիս ամիսն, որ նոր ցորեանն դուրս եկաւ. ոչ թէ միայն Հողթայն տունս, այլ ամենայն երկիրս այսպէս... Շատ մարդ բանջարաւ ապրեր, շատ մշակ առանց վարձի բան կանէր»[1]։

Մեր ձեռքի տակ, ինչպես ասացինք, կան մոտ 80 տարվա գներ, ինչպես կենսամթերքների, այնպես էլ հագուստեղենի ու կենցաղային զանազան իրերի։ Գների վերաբերյալ այդ տվյալները, ինչպես նկատեցինք նաև աշխատավարձի տվյալների մասին, անընդմիջվող, հետևողական մի շարք չեն կազմում։ Նրանք ցրիվ են և պատահական։ Որպեսզի հնարավոր լինի տալ գների շարժման գոնե մոտավոր պատկերը, խմբավորել ենք տվյալները ըստ տասնյակ տարիների՝ 1750—59, 1760—69 և այլն։ Այս դրությամբ դիտելով գների շարժումը՝ նկատում ենք առաջին հերթին գների աստիճանական բարձրացում։ Այսպես, գարին, որն ըստ երևույթին ամենից գործածականն է եղել չքավոր, գուցե և միջակ գյուղացիության համար և էջմիածնի սննդամթերքային գնումների մեջ ամենից մեծ տեղն է բռնում (երևի մշակներին կերակրելու համար), 50 դիանից (1740—49) բարձրացել է 375 դիանի (միջինը 1810—20 թվականներին), այսինքն թանկացել է 7,5 անգամ։ Նույն ժամանակաշրջանում ցորենը 80 դիանից հասել է մոտ 500 դիանի (միջինը), այսինքն բարձրացել է մոտավորապես 6 անգամ, սիրը՝ 5 անգամ և այլն։ Կտավը, որ գյուղացիության հագուստեղենի հիմնական նյութն էր կազմում (սպիտակեղենը պատրաստվում էր կամ չներկած, կամ կարմիր ներկած կտավից, կապույտ ներկած կտավից պատրաստվում էր նաև արտաքին հագուստը) թանկացել է 4 անգամ՝ 40 դիանից բարձրանալով մինչև 160 դիանի։ Գների այս վերելքն առանձնապես աչքի է ընկնում XIX դարի սկզբի երկու տասնամյակներում։

Գների վերաբերյալ այս տվյալները հնարավորություն չեն ընձեռում բացատրել գների բարձրացման պատճառները։ Վերջինս, անշուշտ, առաջին հերթին պետք է կապված լիներ շրջանառության մեջ գտնվող դրամի կուրսի անկման հետ, որը իր հերթին պայմանավորված էր դրամի մեջ գտնվող ազնիվ մետաղի՝ ոսկու, արծաթի բանակի իջեցման հետ։ Դրամի մեջ ազնիվ մետաղի պակասեցման մի դեպքի մասին պատմում է Զաքարիա Ագուլեցին իր «Օրագրության» մեջ.

«Թվին ՌՃԺԱ-ում (1662), որ Շահարաս իւր օլքին հրաման տվան, որ ամեն զառավխանէն արասին Բ մսխալ կարեն, որ Ե (5) շահանոց է, զերայ առաջ Դ (4) շահանոց էր»[2]։

Սակայն այս վերաբերում է XVII դարին։ Մեր ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանի վերաբերյալ էջմիածնի դավթարներից մեկում (1763 թվականի հոկտեմբերի 6-ի հաշիվներում) կարդում ենք հետևյալ ուշագրավ հողվածը, որը գրել է ծախսարար վարդապետը.

«Փողն որ կոտրեցաւ ձեռացս կայր վեց թուման փող... Մնասուր եղև մին թուման և երկու հազար դիան»։

---

[1] Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, էջ 114։
[2] Նույն տեղում, էջ 60, հմմտ. էջ 71։

Թե ինչ պատճառով «փողը կոտրեցավ», այսինքն՝ նրա արժեքը պակասեց 20 տոկոսով (1 թ. երկու հազ. դիանը = 6 թումանի 20 տոկոսին), այդ մասին ոչինչ չգիտենք։ Սակայն, անկասկած, այդ հանգամանքը զգալիորեն անդրադարձավ գների վրա և որոշ չափով ազդեց նաև աշխատավարձի վրա։

Մենք կարող ենք բերել նաև հետևյալ հետաքրքրական փաստը, որը կապ ունի դրամի կուրսի անկման հետ։ 1789 թ. ռուսական «նիրալ»-ը (իմպերիալը, որը տասը ռուբլիանոց ոսկի դրամ էր—Բ. Հ.) էջմիածնի դավթարում համարժեք է համարվել թուրքական 15 ղուրուշին, որն իր հերթին հաշվվել է հավասար 1 պարսկական թումանի[1]։

Դրանից քառասուն տարի հետո, 1829 թ., ըստ Ի. Շոպենի տվյալների, իրանական թումանը գնահատվում էր ռուսական դրամով 4 արծաթ ռուբլի, որը կազմում էր իմպերիալի 4/10-ը կամ 40 տոկոսը, այլ կերպ ասած՝ իրանական թումանի արժեքը ռուսական իմպերիալի (10 ռուբլիանոցի) համեմատությամբ իջել էր 60 տոկոսով։

Համեմատենք մի քանի առաջնակարգ անհրաժեշտության մթերքների գները 1789 և 1829 թթ. տվյալներով.

	1789 թ.	1829 թ.
Գարի (լիտրը)	60 դիան	125 դիան
Ցորեն »	80 դիան	175 դիան
Զալթուկ »	100 դիան	200 դիան
Կտավհատ »	100 դիան	450 դիան

Գների այս բարձրացումը 2—2,5 անգամ կարող է բացատրվել առաջին հերթին իրանական դրամի կուրսի անկումով։ Սակայն հպիվ թե դա կարելի լինի համարել միակ պատճառը. անշուշտ կան նաև այլ պատճառներ, որոնց պարզաբանման համար մեր ձեռքին տվյալներ չունենք։

Նույն Ի. Շոպենը բերում է իր աշխատության մեջ սննդամթերքների գների մի ցուցակ, որը վերաբերում է 1829 թվականին, ըստ որում գները նշանակված են ռուսական արծաթ փողով։ Բերում ենք այդ ցուցակը, ռուսական դրամի կողքին տալով նաև իրանականը.

Ցորեն՝ խալվարը 7 ռ.—1 թում. 7500 դիան, լիտրը 7/100 ռ.—7 կ.—175 դիան
Գարի՝ խալվարը 5 ռ.—1 թում. 2500 դիան, լիտրը 5/100 ռ.—5 կ.—125 դիան
Զալթուկ՝ խալվարը 8 ռ. 2 թում., լիտրը 8 կ.—200 դիան
Ծխախոտ՝ լիտրը 50 կ. 1250 դիան
Սոխ՝ լիտրը 5 կ.—125 դիան
Բամբակ՝ խալվարը 120 ռ.—30 թուման, լիտրը 1 ռ. 20 կ.—3000 դիան
Գենագնչակ՝ խալվարը 15 ռ.—3 թում. 7500 դիան, լիտրը 15 կ.—375 դիան
Կտավհատ՝ խալվարը 18 ռ.—4 թում. 5000 դիան, լիտրը 18 կ.—450 դիան
Սիսեռ՝ լիտրը 20 կ.—500 դիան
Ոսպ՝ լիտրը 20 կ.—500 դիան։

Հետևելով աշխատավարձի շարժմանը, մենք կնկատենք, որ չնայած բավական զգալի տատանումներին, այն գնում է դեպի վերելք։ Այսպես, 1750 թվականից մինչև 1820 թ., 70 տարվա ընթացքում հասարակ բանվորի աշխատավարձը (1-ին կատեգորիա) 50 դիանից հասել է մինչև 200 դիանի, այսինքն աճել է

[1] Բ. Հարությունյան, Օտարերկրյա դրամների շրջանառությունը և կուրսը Երևանի խանության մեջ XVIII դարի երկրորդ կեսին, Տեղեկագիր «Արմֆանի», 1940, № 3, էջ 74։

4 անդամ. կանանց (քաղհանավորներ, բրինձ ընտրողներ և այլն) աշխատավարձը 30—40 դիանից բարձրացել է մինչև 100 դիան (1800-ական թթ.), այսինքն՝ ավելացել է $3^1/_3$—2,5 անդամ և այլն։ Սակայն նոմինալ աշխատավարձի բարձրացում չի նշանակում աշխատավորի կենսական մակարդակի բարձրացում, քանի որ կենսամթերքների և հագուստեղենի գների աճը կատարվել է ոչ նվազ չափով։ Այսպիսով, ընդհանուր առմամբ, ռեալ աշխատավարձի մեջ մենք վերելք չենք նկատում[1]։

Կարևոր և հիմնական խնդիր է՝ պարզել, թե աշխատավորի աշխատավարձը համապատասխանո՞ւմ էր աշխատանքի արժեքին, թե ոչ, հասնո՞ւմ էր արդյոք կենսական մինիմումի մակարդակին։ Բանվորական ուժի արժեքի մասին Կ. Մարքսը գրում է. «Բանվորական ուժի արժեքը որոշվում է այն կենսական միջոցների արժեքով, որոնք անհրաժեշտ են բանվորական ուժ արտադրելու, այն զարգացնելու, պահպանելու և հավերժացնելու համար»[2] (ընդգծումները հեղինակինն են—Բ. Հ.)։

Մի ուրիշ տեղ նա գրում է. «Աշխատուժի արժեքի վերջին սահմանը կամ նվազագույն սահմանը կազմում է ապրանքների այն քանակի արժեքը, առանց որոնց ամենօրյա մատակարարման՝ աշխատուժի կրողը, մարդը չի կարող վերանորոգել իր կյանքի պրոցեսը, ուրեմն՝ կազմում է ֆիզիկապես անհրաժեշտ կենսամիջոցների արժեքը։ Եթե աշխատուժի գինն ընկնում է մինչև այս մինիմումը, ապա նա ընկնում է իր արժեքից ցած, որովհետև այս պայմաններում նա կարող է պահպանվել և զարգանալ միմիայն հյուծված ձևով»[3]։

Վերը մենք բերեցինք մի շարք տվյալներ, որոնք վերաբերում են «գործատիրոջ հացով» և «խոշկամուզդ»-ով աշխատող բանվորների աշխատավարձին։

Այդ տվյալները հնարավորություն են տալիս պարզելու, թե բանվորի ստացած օրավարձը քանի մարդ կարող էր կերակրել այնպիսի հասարակ սննդով, ինչով կերակրում էր գործատերը բանվորին։ Համեմատելով այդ տվյալները՝ մենք կտեսնենք, որ խոշկամուզդ աշխատավարձը գերազանցում է «գործատիրոջ հացով» աշխատողի դրամավճար աշխատավարձին 1,5-ից մինչև 2 անդամ. այսինքն խոշկամուզդով աշխատող բանվորը լրիվ օրավարձով կարող էր կերակրվել 1,5-ից մինչև 2 անդամ. դուրս գալով իրեն՝ բանվորին, կմնա 1/2 կամ 1 մարդ, որին կկարողանար կերակրել բանվորը։ Սակայն պետք է

---

[1] 1940 թ. հրատարակած մեր „Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв." աշխատության մեջ, համեմատության դնելով էջմիածնի վանական տնտեսության 1743 և 1800 թթ. տվյալները աշխատավարձի և գների վերաբերյալ, մենք դիտել էինք նոմինալ աշխատավարձի բարձրացման հետ նաև ռեալ աշխատավարձի որոշ բարձրացում (էջ 65)։ Երկու տարիների վերաբերյալ տվյալների վրա հիմնված այդ դիտողությունը պատահական բնույթ է կրում և, ինչպես տեսնում ենք, չի հիմնավորվում ավելի շատ տարիներին վերաբերող և ավելի բազմաթիվ ու բազմազան տվյալներով, որոնք հիմք են կազմել մեր այս ուսումնասիրության։ Գների շարժումը դիտելով, մենք նկատել ենք, որ այն տալիս է մեծ ելևէջներ առհասարակ, որ 1800 թվականից հետո մթերքների գներն ընդհանրապես ավելի արագ են աճում, քան աշխատավարձը, որով ռեալ աշխատավարձի այն երևութական աճը, որ մենք դիտել էինք համեմատության դնելով երկու տարիների (1743 և 1800) տվյալները, չի նկատվում, երբ ընդգրկում ենք նաև 1800 թվականից հետո եղած տվյալները։

[2] Կարլ Մարքս, Ընտիր երկեր երկու հատորով, հատ. 1, Քաղգրակպետհրատ, Երևան, 1941, էջ 346։

[3] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, առաջին գիրք, Երևան, Կուսհրատ, 1933, էջ 138։

նկատի առնել, որ ոչ աշխատանքային օրերին (կիրակի և այլն) նա օրավարձ չէր ստանում և բացի այդ նա, մանավանդ գյուղատնտեսության բնագավառում, ապահովված չէր մշտական աշխատանքով։ Ավելացնենք նաև այն, որ բացի սննդից բանվորը պիտի ունենար նաև այլ ծախսեր, որպիսիք մենք հաշվի չենք առել համեմատության ժամանակ։ Այս բոլորը հաշվի առնելով, մենք գալիս ենք այն եզրակացության, որ մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում Երևանի խանության մեջ միայն վարձու աշխատանքով, հատկապես օրավարձով, բանվորը հազիվ միայն կարողանար գոյություն ունենալ. նա զրկված էր ընտանիք պահելու հնարավորությունից։ Համեմատաբար ավելի տանելի պետք է համարել տարեկան աշխատավորների («ամալայների») վիճակը, որոնք սնունդ, հագուստ և ապրելու տեղ էին ստանում վանքից։ Սակայն, նրանց դրամով ստացած աշխատավարձն էլ այնքան չնչին էր, որ չէր բավարարի անգամ մի հոգու ապրուստը հայթայթելու համար։ Ուստի այդպիսիները մեծ մասամբ ամուրիներ էին, կամ հեռավոր տեղերից (մեծ մասամբ Թուրքահայաստանից) եկածներ, որոնք իրենց աշխատավարձի դրամական չնչին ավելցուկը տուն էին ուղարկում, գոնե փոքր չափով նպաստելու իրենց չքավոր ընտանիքներին։

НАЕМНЫЙ ТРУД В ЕРЕВАНСКОМ ХАНСТВЕ В XVIII в. И В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XIX в.

Б. М. АРУТЮНЯН

(Резюме)

Автор анализирует экономическое положение Ереванского ханства на протяжении XVIII в. и в первой четверти XIX в., до присоединения Восточной Армении к России. В этот период в Ереванском ханстве самым крупным было монастырское хозяйство Эчмиадзина — резиденции армянского католикоса. На основе изучения расчетных книг эчмиадзинского монастырского хозяйства, значительная часть которых хранится в архивном отделе Государственного Матенадарана Армянской ССР, а также армянских историографических источников, автор освещает вопросы, касающиеся условий наемного труда, и показывает размеры заработной платы в различные отрезки времени указанного периода. Данные, относящиеся к монастырскому хозяйству Эчмиадзина, автор считает характерными для всего ханства в целом.

Статья состоит из следующих разделов: 1) Сферы применения наемного труда; 2) Источники и контингент наемной рабочей силы; 3) Условия найма и формы заработной платы; 4) Размеры и движение заработной платы.